**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/47 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **20.07.2020թ.**

10.07.2020-20.07.2020թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ ապրանքների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/47 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Գրիգորյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի գլխավոր ինժեներ, |
| Ն. Ներսեսյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի պետի տեղակալ, |
| Է. Խաչատրյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի թունելային կառույցների ուղեմասի պետ, |
| Ջ. Աղամալյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի աշխատանքի նորմավորման մասնագետ: |

Հանձնաժողովի նախագահ Ա. Բեգլարյանը («Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի պետ) բացակայում էր: Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Գրիգորյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի թվով 4 անդամ, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:
5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2020թ.-ի հուլիսի 10-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 11:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Էլ. տրանսֆորմատոր ТСЗМ-380/36В2.5квт | 220000 |
| 2 | Էլ. տրանսֆորմատոր ТСЗМ-380/220 В - 2.5квт | 220000 |
| 3 | Քար տուֆե 350*250*200 մմ | 210000 |
| 4 | Էլ.թրթռիչ 36Վ,L=3մ | 360000 |
| 5 | Էլ"Հպարկիչ 3Ֆ 160Ա | 60000 |
| 6 | Էլ"Ավտոմատ անջատիչ 3Ֆ 160Ա | 45000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | «ՍԿԱՅ 21» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00220794, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 1 թաղ. 9 շենք, Հեռ.՝ +37491991129, էլ. հասցե՝ karen.ghalechyan8@gmail.com |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով

սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված հայտում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ Հավելված 1-ի: Հավելված 1-ով ներկայացված շահառուների մասին տեղեկատվության մեջ նշված չէ անձը հաստատող փաստաթղթի տեսակը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Էլ. տրանսֆորմատոր ТСЗМ-380/36В2.5квт | - | 220000 | - | - | - |
| 2 | Էլ. տրանսֆորմատոր ТСЗМ-380/220 В -2.5квт | - | 220000 | - | - | - |
| 3 | Քար տուֆե 350*250*200 մմ | «ՍԿԱՅ 21» ՍՊԸ | 210000 | 449960 | 0 | 449960 |
| 4 | Էլ.թրթռիչ 36Վ,L=3մ | - | 360000 | - | - | - |
| 5 | Էլ. Հպարկիչ 3Ֆ 160Ա | - | 60000 | - | - | - |
| 6 | Էլ. Ավտոմատ անջատիչ 3Ֆ 160Ա | - | 45000 | - | - | - |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը,
2. 1-ին, 2-րդ և 4-6-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները:
3. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել «ՍԿԱՅ 21» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Հավելված 1-ում արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. «ՍԿԱՅ 21» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել է արձանագրված թերության շտկված տարբերակը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 3 | «ՍԿԱՅ 21» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Քանի որ 3-րդ չափաբաժնին հայտ ներկայացրած մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում էր գնման հայտով սահմանված գինը, հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովի նիստը կասեցնել՝ բավարար գնահատված մասնակցի հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

2. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 17.07.2020թ. ժամը 11:00-ն, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքի 13-րդ հարկում:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

17.07.2020թ. չկայացան գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները: Բանակցություններին մասնակիցը չներկայացավ և նոր նվազեցված գնային առաջարկ չներկայացվեց:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. 3-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

| **Հանձնաժողովի՝** | | |
|---|---|---|
| **Նախագահ** | | Ա. Գրիգորյան |
| **Անդամներ** | | Ն. Ներսեսյան |
| | | Է. Խաչատրյան |
| | | Ջ. Աղամալյան |
| **Քարտուղար** | | Մ. Ղազարյան |